«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի
պետ, ոստիկանության գնդապետ
Ա. Մուրադյան
« 15 » 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի՝ Արթուր Ռազմիկի Դավթյանի՝ «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնը, մասնակցությամբ՝ իրավաբանական գիտությունների թեկնածու Ռ. Ռ. Մարանդյանի, Ա. Յու. Թադևոսյանի, Գ. Մ. Խուդոյանի, Ա. Գ. Սաֆարյանի և Ա. Ս. Մարգարյանի, քննարկեց Արթուր Ռազմիկի Դավթյանի՝ «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով ԺԲ.00.01 «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումնքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին.

Ժամանակակից հայ հասարակության առջև ծառացած սոցիալ-տնտեսական մարտահրավերներով է պայմանավորված թեմայի հետազոտության արդիականությունը: Ընդ որում, նոր իրավական ընկալման առանցքը հանդիսանում է սեփականության իրավունքի իրականացման կառուցակարգի գաղափարը: Կարևորելով սեփականության ինստիտուտի դերակատարությունը քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական պետության կայացման ու զարգացման

գործնականացում՝ Հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրներին միջազգային իրավական ակտերում, իրավակիրառ պրակտիկայում, ազգային իրավական և դատական համակարգերում:

Թեկնածուական առնչախոսությունը բաղկացած է ներածությունից, տասներեք նախագիծ պարունակող չորս գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է Հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակն ու խնդիրները, տեսական և նորմատիվ հիմքերը, մեթոդաբանական հիմունքները, գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, փորձաքննությունը, արդյունքների հիմնավորվածությունը, օբյեկտիվությունը, արժանահավատությունը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Սեփականության ինստիտուտի ընդհանուր բնութագիրը՝ պատմական և հասարակական զարգացման տեսանկյունից» վերտառությամբ գլխում Հեղինակը բացահայտել է կազմակերպված հասարակության տնտեսական հիմք հանդիսացող սեփականության ինստիտուտի ընդհանուր հասկացությունը, ներկայացրել սեփականության ինստիտուտի պատմական զարգացման տեսական հարցադրումները, անդրադարձել է սեփականության և հասարակական առաջընթացի հարաբերակցությանը:

Աշխատանքի երկրորդ գլխում, որը կրում է «Սեփականությունը և իրավունքը» խորագիրը, լուսաբանված են սեփականության իրավունքի բովանդակային առանձնահատկությունները և բնութագրկան հատկանիշները: Միաժամանակ, Հեղինակը իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով սեփականության ինստիտուտի իրավական կարգավորմանը և փիլիսոփայության տեսանկյունից սեփականության իրավունքի ինտերպրետացիային (մեկնությանը):

«Սեփականության ինստիտուտի իրավակարգավորումների առանձնահատկություններն արդի ժամանակաշրջանի առաջատար իրավական համակարգերում» խորագրով երրորդ գլխում Հեղինակն ներկայացրել է սեփականության ինստիտուտը ռոմանոգերմանական և անգլո-ամերիկյան իրավական համակարգերում, նաև քննարկել է «Թրաստի» և գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտների համեմատական վերլուծությունը:

Աշխատանքի չորրորդ գլխում, որը կրում է «Սեփականության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրները» խորագիրը, լուսաբանված են սեփականության իրավունքի պաշտպանության էությունը և հասկացությունը, պաշտպանության հիմնախնդիրը միջազգային իրավական ակտերում և իրավակիրառ պրակտիկայում: Ընդ որում, Հեղինակը իրականացրել է քննարկվող հիմնախնդրի վերլուծություն՝ անդրադառնալով սեփականության իրավունքի պաշտպանությանը ազգային իրավական և դատական համակարգերում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում Հեղինակի կողմից արված եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Գիտական նորույթի տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող առաջին դրույթը: Հեղինակը ուշադրություն է հրավիրում սեփականության ինստիտուտի սոցիալական նշանակության վրա՝ առանձնացնելով ողջ հասարակությանը ու նրա յուրաքանչյուր անդամին ծառայելու դերակատարությունը: Հարկ է նկատել, որ ներպետական իրավական համակարգի շրջանակներում առանձնահատուկ տեղ է հատկացված սեփականության իրավունքի հռչակմանը, իրացմանը և երաշխիքների ամրագրմանը, ինչպես պետության Սահմանադրության.այնպես էլ օրենսդրական ակտերի մակարդակով, ինչն արդեն իսկ արտացոլում է հասարակության տնտեսական հարաբերությունների հիմքում ընկած վերոնշյալ ինստիտուտի արժեքը: Չթերագնահատելով ատենախոսի կողմից իրականացված հետազոտության արժեքը, այնուամենայնիվ, կարծում ենք, որ վերոհիշյալ մտեցումը չի պարունակում գիտական նորույթի էական տարրեր: Այն առավելապես եզրակացությանը բնութագրական ամփոփիչ բովանդակություն ունի:

2. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող յոթերորդ դրույթը: Աշխատանքում բավարար չափով հիմնավորված չէ առաջարկվող դրույթի էությունը: Այլ կերպ, ներկայացված չէ իրավունքի տարբեր համակարգում հանրային իշխանության կողմից սեփականության իրավունքով կաշկանդվածության մասշտաբը:

3. Թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես, ատենախոսության՝ «Իրավական ակտեր» բաժնում ներառված ոչ բոլոր աղբյուրների դեպքում են նշված ՀՀ պաշտոնական կամ գերատեսչական ակտերի տեղեկագրի հերթական և ընդհանուր համարները: «Ատենախոսություններ և սեղմագրեր» բաժնի երկրորդ և հինգերորդ համարակալման ներքո վկայակոչված են միևնույն Հեղինակի նույնական վերնագրով ատենախոսությունները: Բացի այդ, գրականության ցանկում ընդհանուր առմամբ բացակայում են նշված աղբյուրների հղումների համարակալման և դրանց էջերի տեղադիրի վերաբերյալ պատշաճ գրառումները:

Ներկայացված նկատառումներ կրում են մասնավոր բնույթ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ:

Հետևություն. «Սեփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ Հեղինակը՝ Արթուր Ռազմիկի Դավթյանը, արժանի է իր կողմից հայցվող իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԲ.00.01-«Պետության և

իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսումունքների պատմություն» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Արթուր Ռազմիկի Դավթյանի՝ «Սնփականության իրավունքի էությունը և բովանդակային առանձնահատկությունները տարբեր իրավական համակարգերում. տեսական և իրավահամեմատական հետազոտություն» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի 2023 թ. նոյեմբերի 15 նիստում, արձանագրություն թիվ 4:

Ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ _____ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի պետի տեղակալ, ինքը և կադրերի և ԱՀՏԱ բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Գ. Գ. Մալխասյան